ԿԱՐԾԻՔ

ՎԱՀԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԳԱՐԱՔՅԱՆԻ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԼՂՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ-ՀԱՄԱՐ

Շուկայական հարաբերությունների պայմաններում էականորեն մեծանում է արտադրության կազմակերպման դերը, քանի որ մրցակցային շուկան թելադրում է իր պահանջները տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի որակի, ցածր ինքնարժեքի, արտադրանքի իրացվելիության և այլ պայմանների բավարարման առումով: Այդ ուղղությամբ ցանկալի արդյունքներ ապահովելու համար խիստ կարևորվում է կառավարման նորագույն մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրումը և արտադրության արդիականացումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում վերջին տարիներին արդյունաբերության ոլորտն ունեցել է զգալի կորուստներ, ինչի հետևանքով վերջինիս մրցակցային հնարավորությունները խիստ սահմանափակվել են: Նման իրավիճակում տնտեսական ու տեխնիկական ժամանակակից բազայի ձևավորումը և թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացումն, առավել, քան ակնհայտ են դառնում: Այս առումով, արտադրական ձեռնարկությունների ֆինանսական կառավարման խնդիրները տնտեսական զարգացման ներկա փուլում ձեռք են բերում մեծ կարևորություն, որոնց լուծման գործում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունի ֆինանսական աուդիտի իրականացումը: Այս ուղղությամբ առկա են բազմաթիվ և բազմապիսի խնդիրներ, որոնց լուծումը ենթադրում է գիտական նորագույն մեթոդների և մոտեցումների մշակում ու կիրառում, ֆինանսական աուդիտի կազմակերպման ու իրականացման ուղղությամբ

գործնական քայլերի իրականացում, ինստիտուցիոնալ և իրավական հիմքերի կատարելագործում և այլն: Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է նշված հարցերի համակողմանի և համալիր ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք, որում իրականացված ուսումնասիրությունները հեղինակին թույլ են տվել հիմնավորել թեմայի կարևորությունը, բացահայտել տվյալ ոլորտի առանձնահատկությունները և մշակել դրանցով պայմանավորված տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Ներածությունում հիմնավորված են հետազոտության արդիականությունը և ստացված արդյունքների գործնական ներդրման հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և բացահայտված են դրան հասնելու հիմնական ուղիները:

Ատենախոսության ***առաջին*** գլուխը նվիրված է ժամանակակից տնտեսական համակարգերում ֆինանսական աուդիտի դերի և նշանակության գնահատմանն ու սուսումնասիրությանը:

Հետազոտության ***երկրորդ*** գլխում վերլուծության են ենթարկվել աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպություններում:

Աշխատանքի ***երրորդ*** գլխում մշակվել են Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպություններում աուդիտի կատարելագործման ուղիները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու

տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է արտադրական կազմակերպություններում պաշարների աուդիտի իրականացման գործընթացում ամբողջական և արժանահավատ աուդիտորական ապացույցներ հավաքագրելու նպատակով պաշարների աուդիտի ընթացակարգերի հաջորդականություն և կիրառելի փաստաթղթերի շրջանակների մշակման, արտադրապրոցեսում պատրաստի արտադրանքի արտադրության նպատակով կատարվող ծախսումների բաշխման արժեորումը գնահատելու համար հավաստիություն (ապացույցներ) ձեռք բերելու մի-ջոցառումների իրականացման մեթոդական մոտեցումների առաջարկման, ինչպես նաև աուդիտի իրականացման գործընթացում աուդիտորական ընկերություններին մաս-նագիտական աջակցություն ցուցաբերելու և ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով ԱՀ-ում լայն լիազորություններով օժտված աուդիտորական անկախ մասնագիտական կառույցի ստեղծման անհրաժեշտության հիմնավորման մեջ:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն տեսական և գործնական նշանակություն£ Դրանք կարող են լայնորեն օգտագործվել տնտեսական կառավարման տարբեր մակարդակներում, դառնալ ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին ոլորտների հետագա զարգացումը պայմանավորող խթանիչ տեղաշարժերի բացահայտման, դրանց ճիշտ նպատակառղղման և տնտեսական կայուն աճի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման արդյունավետ գործիք: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ դիտողություններից, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Արտադրական ձեռնարկությունների արդյունավետ գործունեության վրա բավականաչափ մեծ է տեխնոլոգիական և կազմակերպչական գործոնների ազդեցությունը: Ըստ էության, կառավարման գործընթացի բարելավման համար հատկապես անհրաժեշտ է համալիր վերլուծության ենթարկել դրանք: Այս առումով, կարծում ենք, ատենախոսությունում ֆինանսական միջոցների կառավարման և ֆինանսական աուդիտի իրականացման խնդիրները պետք է առավել խորությամբ դիտարկվեին նաև այդ տեսանկյունից:
2. Արտադրական ձեռնարկությունների գործունեությունն ու զարգացումն ունի որոշակի առանձնահատկություններ, կախված տնտեսական գործունեության ոլորտներից և ճյուղերից: Ըստ էության, դա նաև իր համապատասխան անդրադարձն է ունենում ֆինանսական ուդիտի կազմակերպման ու իրականցման վրա: Կարծում ենք, ատենախոսությունում իր վերլուծությունների իրականացման համար հեղինակը պետք է ընտրեր արտադրական ձեռնարկությունների առավել լայն շրջանակ՝ ֆինանսական աուդիտի իրականացման խնդիրների առավել ամբողջական լուծումներ ապահովելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են արտադրական ձեռնարկություններում ֆինանսական աուդիտի իրականացման հարցերին նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Վ. Գարաքյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակը, ակնհայտորեն, բարձր է, ինչի մասին է վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված

արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել ֆինանսական աուդիտի իրականացման գործընթացում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները: Ընդհանուր առմամբ, Վ. Գարաքյանի «Ֆինանսական աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները արտադրական ձեռնարկություններում (ԷՂՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը. 00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու
23.04.2020թ.

Գ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Պարոն Գ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ
պ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

23.04.2020թ.